ԿԱՐԵԿՑԻՐ ՔՈ ԸՆՏԱՆԻՔԻՆ

Հրաշալի ողորմություն (մաս 2)

Մայրերի օր

«Իմաստությամբ պիտի գնամ կատարելության ճանապարհով. ե՞րբ պիտի գաս ինձ մոտ. իմ սրտի անմեղությամբ պիտի ընթանամ իմ տան մեջ:» Սաղմոս 101:2

Ստուգարք: Ինչքա՞ն կարեկից եմ իմ ընտանիքի հանդեպ

Երբ իմ կողակիցը, քույրը, եղբայրը կամ ընտանիքի այլ անդամը...

* Խոսակցության ընթացքում սխալ մանրամասներ է ներկայացնում
  - Ընդհատում եմ նրան և ուղղում հրապարակայնորեն
  - Լսում եմ և թույլ տալիս, որ անցնի, իմանալով, որ ես ինքս էլ նույն բանն եմ անում

* Երբ նույն սխալը անում է նորից ու նորից
  - Նյարդայնում և բարկանում եմ
  - Մեծահոգությամբ ներում եմ նրանց և աղոթում նրանց համար

* Ավելի ուշադրության են արժանանում, քան թե եմ նրանց արժանացնում
  - Վրդովվում եմ և փորցում եմ նվաստացնել նրանց
  - Ուրախանում եմ նրանց համար

* Ասում կամ անում են մի բան, որ ես չեմ հասկանում
  - Ենթադրում եմ, որ ունեն լավագույն նպատակը այդ անելու
  - կասկածում եմ նրանց շարժառիթներին և մտածում ամենավատը

* Ես ավելի կաղաքավարի եմ
  - Օտարների հանդեպ
  - Իմ սեփական ընտանիքի հանդեպ

Ողորմությունը սերն է գործողության մեջ

«Սերը հանդուրժող է, սերը բարի է. սերը չի նախանձում, չի գոռոզանում, չի մեծամտանում: Անամոթություն չի անում, սեփական շահը չի փնտրում, բարկությամբ չի գրգռվում, չար բան չի մտածում, անիրավության վրա չի ուրախանում, այլ ուրախանում է ճշմարտության հետ, ամեն բան հանդուրժում է, ամեն բանի հավատում, ամեն բանի հանդեպ հույս ունի, ամեն բանի համբերում է: Սերը երբեք չի անհետանում. մարգարեությունները կանհետանան, լեզուները կլռեն, գիտությունը կխափանվի:» Ա Կորնթացիս 13:4-8

Ընտանիքին ողորմություն ցույց տալու 4 միջոցներ

1. Անտեսել զայրութն ու վիրավորանքները

«Սերը բարկությամբ չի գրգռվում:» Ա Կորնթացիս 13:5

«Հանցանքը ներողը հետամուտ է սիրո, իսկ խոսքը կրկնողը մտերիմ ընկերներին կբաժանի:» Առակներ 17:9

«Մարդու ... փառքը հանցանքն անտեսելն է:» Առակներ 19:11

«Զգո՛ւյշ եղեք. միգուցե մեկը չարի փոխարեն չարը հատուցի. այլ իրար հետ ու բոլորի հանդեպ ամեն ժամ բարի՛ն գործեք:» Ա Թեսաղոնիկեցիս 5:15

2. Բարի լինել, երբ նույնիսկ արժանի չեն, բայց կարիք ունեն

«Սերը հանդուրժող է, սերը բարի է ... ամեն բանի համբերում է:» Ա Կորնթացիս 13:4,7

«Մի՛ զլացիր բարություն անելու նրան, ով արժանի է, եթե ձեռքումդ այդ զորությունը կա:» Առակներ 3:27

3. Մոռանալ անցյալի վիրավորանքները

«Սերը անամոթություն չի անում, սեփական շահը չի փնտրում, բարկությամբ չի գրգռվում, չար բան չի մտածում:» Ա Կորնթացիս 13:5

4. Հավատալ, որ Աստված նրանց կյանքերում է

«Սերը ամեն բանի հավատում, ամեն բանի հանդեպ հույս ունի, ամեն բանի համբերում է:» Ա Կորնթացիս 13:7

«Լսի՛ր իմ աղաչանքի ձայնը, երբ քեզ օգնության աղաղակ բարձրացնեմ, երբ իմ ձեռքը բարձրացնեմ դեպի քո ամենասուրբ տաճարը:» Սաղմոս 28:2

«Հիշում է իմ հոգին և ընկճվում է իմ ներսում: Սրանք ես իմ միտքն եմ բերում, ուստի և հույս ունեմ: Տիրոջ ողորմությունը չի դադարում, նրա գթությունը վերջ չունի: Նրանք ամեն առավոտ նորանում են. մեծ է քո հավատարմությունը:» Երեմիայի Ողբերը 3:20-23

Այս նույն ձևով Աստված ողորմում է քեզ.

Հաջորդ Կիրակի:

«ԱՍՏՎԱԾ ԿԱՐՈՂ Է ԳՈՐԾԱԾԵԼ ՑԱՆԿԱՑԱԾ ՄԱՐԴՈՒ»

Հովիվ Սարօ Խաչիկեան